

# ՍԻԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

## ՀԱՍԱԾԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևարուղում: Պատասխանների ճևարդիքի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

**1** Ե՞րբ է Նարոպալասարը թագաղլրվել որպես Բարեկոնիայի արքա.

- 1) Ք.ա. 705 թ.
- 2) Ք.ա. 626 թ.
- 3) Ք.ա. 621 թ.
- 4) Ք.ա. 597 թ.

**2** Ե՞րբ է Պիալին Կարձահասակը հռչակվել Ֆրանկական պետության թագավոր.

- 1) 745 թ.
- 2) 751 թ.
- 3) 756 թ.
- 4) 761 թ.

**3** Ե՞րբ է Մոսկվայում հրավիրվել դասային ներկայացուցչական առաջին երկրային ժողովը.

- 1) 1549 թ.
- 2) 1576 թ.
- 3) 1598 թ.
- 4) 1613 թ.

**4** Ե՞րբ է Օտտոն Բիսմարկը Պրուսիայի թագավորի կողմից նշանակվել առաջին նախարար.

- 1) 1849 թ.
- 2) 1862 թ.
- 3) 1866 թ.
- 4) 1871 թ.

**5** Ե՞րբ է Նիկոլայ II-ը հրաժարվել գահից.

- 1) 1917 թ. փետրվարի 27-ին
- 2) 1917 թ. մարտի 2-ին
- 3) 1917 թ. ապրիլի 12-ին
- 4) 1917 թ. հոկտեմբերի 25-ին

**6** Ե՞րբ է Ստալինի նախագահությամբ ստեղծվել Պաշտպնության պետական կոմիտեն.

- 1) 1941 թ. հունվարի 31-ին
- 2) 1941 թ. հունիսի 28-ին
- 3) 1941 թ. հունիսի 30-ին
- 4) 1941 թ. հուլիսի 2-ին

**7** Ե՞րբ է ուժի մեջ մտել Եվրամիության ինը երկրների միջև սահմանային անձ-նազարյան ստուգման փոխադարձ վերացման մասին Շենգենյան համաձայնագիրը.

- 1) 1993 թ.
- 2) 1995 թ.
- 3) 1997 թ.
- 4) 1999 թ.

**8** Ի՞նչ էր Դարեհ III-ի անունը նախքան Աքեմենյան տերության արքա դառնալը.

- 1) Արշամ
- 2) Շամուել
- 3) Դադարշի
- 4) Կարաշ

**9** Ո՞ր արքայատոհմի վերջին ներկայացուցիչներն են ստացել «ծույլ թագավորներ» անվանումը.

- 1) Կարոլինգների
- 2) Հաբսբուրգների
- 3) Ռոմանովների
- 4) Մերովինգների

**10** Ո՞ւմ է տրվել կայսերական տիտղոսը Վերդենի դաշնագրով.

- 1) Լյուդովիկոս Գերմանացուն
- 2) Լյուդովիկոս Բարեպաշտին
- 3) Լոթարին
- 4) Կարլոսին

**11** Ո՞վ է «Սիքստինյան Տիրամայրը» կտավի հեղինակը.

- 1) Ռեմբրանդտը
- 2) Լեոնարդո դա Վինչին
- 3) Ռուբենսը
- 4) Ռաֆայելը

**12** Ո՞ր երկիրն է ստացել «Համաշխարհային շաքարաման» անվանումը.

- 1) Ալժիրը
- 2) Լիբիան
- 3) Կուբան
- 4) Կիպրոսը

**13** Ո՞ւմ կողմից հրավիրված հայագետների կողմից է գրվել «Հայերը արիացիներ» աշխատությունը.

- 1) Բ. Մուսուլինիի
- 2) Վ.Վիլսոնի
- 3) Հ. Քոլի
- 4) Թ. Ռուզվելտի

**14** Ո՞ր քաղաքն է որակվել որպես սառը պատերազմի մայրաքաղաք.

- 1) Վաշինգտոնը
- 2) Փարիզը
- 3) Բեռլինը
- 4) Լոնդոնը

15

Ի՞նչ անուն է տրվել Մարգարետ Թետչերին.

- 1) «Անգլիայի պարծանք»
- 2) «Անգլիայի մեծ տիկին»
- 3) «մեծ բարոնուհի»
- 4) «երկարյա լեդի»

16

Ի՞նչ է նշանակում խալիֆա.

- 1) Ալլահի քարտուղար
- 2) Ալլահի առաջյալի տեղակալ
- 3) Ալլահի առաջյալ
- 4) Ալլահի փոխանորդ երկրի վրա

17

**Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Եզիզոսի սահմանների ընդարձակումը Թութմոս III փարավոնի օրոք  
բ. Էխնաթոն փարավոնի կրոնական բարեփոխումները  
գ. Մեսֆիս մայրաքաղաքի կառուցումը Մինա արքայի կողմից  
դ. Համաեզիական XI հարստության հիմնադրումը  
ե. Ռամզես II-ի և խեթական արքա Խաթուսիլիս III-ի միջև պայմանագրի կնքումը
- 1) ա, բ, գ, ե, դ
  - 2) ա, զ, դ, ե, բ
  - 3) զ, դ, բ, ա, ե
  - 4) զ, դ, ա, բ, ե

18

**Գահակալներին դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

- ա. Ֆրիդրիխ I Շիկամորուս  
բ. Ֆիլիպ IV Գեղեցիկ  
գ. Հովհան Անհողին  
դ. Բարսեղ (Վասիլ) II
- 1) ա, բ, գ, դ
  - 2) դ, ա, զ, բ
  - 3) ա, դ, զ, բ
  - 4) դ, զ, ա, բ

19

**Պատմական փաստաթղթերը դասավորել ըստ դրանց ստեղծման ժամանակագրական հաջորդականության.**

- ա. «Առաջարկությունների գլուխներ» փաստաթղթի կազմումը անկախականների կուսակցության կողմից Անգլիայում  
բ. «Իրավունքների օրենքի» հաստատումը Անգլիայում  
գ. «Անձի անձեռնմխելիության մասին» օրենքի ընդունումը Անգլիայում  
դ. «Կառավարման միջոց» անունով սահմանադրության կազմումն Անգլիայում
- 1) դ, ա, զ, բ
  - 2) դ, զ, բ, ա
  - 3) ա, դ, զ, բ
  - 4) ա, զ, բ, դ

**20** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ֆոլկլենդյան պատերազմի սկիզբը  
բ. Ուոթքրեյթյան գործը  
շ. Ալժիրում բռնկված սպայության խռովության սկիզբը  
դ. Կարիբյան ճգնաժամը

- 1) գ, դ, բ, ա
- 2) դ, գ, բ, ա
- 3) գ, բ, ա, դ
- 4) բ, ա, գ, դ

**21** Ե՞րբ է զահակալել Յահմու Ի-ը.

- 1) Ք.ա. 1591-1572 թթ.
- 2) Ք.ա. 1571-1540 թթ.
- 3) Ք.ա. 1540-1517 թթ.
- 4) Ք.ա. 1450-1421 թթ.

**22** Ե՞րբ է կնքվել Ուտրեխտի միությունը.

- 1) 1563 թ.
- 2) 1579 թ.
- 3) 1581 թ.
- 4) 1587 թ.

**23** Ե՞րբ է ԱՄՆ-ը դարձել դաշնային հանրապետություն.

- 1) 1776 թ.
- 2) 1781 թ.
- 3) 1787 թ.
- 4) 1791 թ.

**24** Ե՞րբ է վերացվել պապի աշխարհիկ իշխանությունը Իտալիայում.

- 1) 1867 թ.
- 2) 1871 թ.
- 3) 1876 թ.
- 4) 1878 թ.

**25** Ե՞րբ է Արխագիան ընդգրկվել Վրաստանի կազմում.

- 1) 1922 թ.
- 2) 1828 թ.
- 3) 1931 թ.
- 4) 1933 թ.

**26** Ո՞ւմ կողմից է գահընկեց արվել Արևմտյան կայսրության վերջին կայսր Հռոմուլոս Ավգուստուլոսը.

- 1) Ալարիխի
- 2) Արկադիոսի
- 3) Հոնորիոսի
- 4) Օդուակորի

**27** Ո՞վ է IV դարի կեսերին Աստվածաշունչը թարգմանել գոթերեն.

- 1) Քլոդվիգը
- 2) Լևոն I Մեծ պապը
- 3) Պիեռ Վալդոն
- 4) Եպիսկոպոս Վուլֆիլը

**28** 1990-ական թթ. ո՞ր երկրում է իրականացվել «Մաքուր ձեռքեր» համազգային գործողությունը.

- 1) Իտալիա
- 2) Գերմանիա
- 3) Ֆրանսիա
- 4) Մեծ Բրիտանիա

**29** Ո՞ր գրողն է հրաժարվել Նոբելյան մրցանակից.

- 1) Ալբեր Քամյու
- 2) Ժան Պոլ Սարտր
- 3) Գաբրիել Գարսիա Մարկես
- 4) Էռնեստ Զեմինգուեյ

**30** Ո՞ր կուսակցության ղեկավարն է եղել Կ.Աղենաուերը.

- 1) «Քրիստոնեղմոկրատական միություն»
- 2) «Միություն և միասնություն»
- 3) «Ազգային ճակատ»
- 4) «Ազգային միասնություն»

**31** Ի՞նչ հետևանք ունեցավ Վորմսի համաձայնագիրը «կայսերական եկեղեցու» համար.

- 1) Ֆրանսիայի եկեղեցին այլսս չէր ենթարկվելու կայսեր իշխանությանը:
- 2) «Կայսերական եկեղեցին» Եվրոպայում էլ ավելի ամրապնդեց իր դիրքերը:
- 3) Իտալիայի և Բուրգունդիայի եկեղեցիներն այլսս չէին ենթարկվելու կայսեր իշխանությանը:
- 4) Գերմանիայի եպիսկոպոսի ընտրությանը կայսրը կամ նրա ներկայացուցիչն այլսս չէին մասնակցելու:

**32** Ո՞ր հիքոսների կողմից Եգիպտոսի արագ նվաճման պատճառներից չէ.

- 1) բնակչության ապստամբությունները
- 2) միասնական պետության տրոհումը
- 3) երկպառակչական պատերազմները նոմերի միջև
- 4) Թերեփի փարավոնի սպանությունը

**33** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Պելոպոնեսի գրավումը թուրքերի կողմից  
բ. Թավրիզի գրավումը շահ Իսմայիլի կողմից  
գ. Կոստանդնուպոլիսի գրավումն ու կռողովուտը թուրքերի կողմից  
դ. Բաղկանյան թերակղզու նվաճման սկիզբը օսմանյան թուրքերի կոմից  
ե. Տրապիզոնի կայսրության գրավումը թուրքերի կողմից  
զ. Անկարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերի պարտությունը  
Լենկ Թեմուրի զորքերից
- 1) բ, զ, ա, գ, դ, ե  
2) զ, ա, դ, ե, գ, բ  
3) դ, ե, զ, գ, ա, բ  
4) դ, զ, գ, ա, ե, բ

**34** Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Խտալիայի հոչակումը թագավորություն  
բ. Երկրորդ հանրապետության սահմանադրության հաստատումը Ֆրանսիայում  
գ. Դեկաբրիստների ապստամբությունը  
դ. Գերմանական կայսրության ստեղծումը  
ե. Ավստրո-Հունգարիա պետության ստեղծումը
- 1) զ, բ, ա, ե, դ  
2) զ, բ, դ, ա, ե  
3) ա, դ, ե, բ, զ  
4) բ, զ, դ, ա, ե

**35** Ո՞վ է հետևյալ արտահայտության հեղինակը.

«Նպատակն արդարացնում է միջոցները»:

- 1) Ֆրանսուա Ռաբլեն  
2) Էրազմ Ռոտերդամցին  
3) Նիկոլ Մաքիավելին  
4) Թոմաս Մորը

**36** Քաղաքական ո՞ր գործին է պատկանում հետևյալ արտահայտությունը.

«Չափից դուրս հեռուն նայելը անհեռատեսություն է»:

- 1) Ուինսթոն Չերչիլ  
2) Ֆրանկլին Ռուզվելտ  
3) Վուդրո Վիլսոն  
4) Նապոլեոն Բոնապարտ

37

**Կատարել համապատասխանեցում.**

- |                 |                |
|-----------------|----------------|
| 1. Էմիլ Զոլա    | ա. Երգիչ       |
| 2. Օգուստ Ռոդեն | բ. դերասան     |
| 3. Վլոդ Մոնե    | գ. գեղանկարիչ  |
| 4. Իվ Սոնտան    | դ. գրող        |
|                 | ե. քանդակագործ |

- 1) 1-բ, 2-դ, 3-զ, 4-ա
- 2) 1-դ, 2-ե, 3-զ, 4-ա
- 3) 1-բ, 2-ե, 3-դ, 4-զ
- 4) 1-դ, 2-բ, 3-ա, 4-զ

38

**Գահակալների անունները համապատասխանեցնել իրենց հետ կապ ունեցող իրադարձություններին.**

- |                  |   |
|------------------|---|
| 1. Շամշի-Աղջուին | ա. Յահմաղի թագավորության նվաճումը,                |
| 2. Ռամզես II     | Հյուսիսային Միջազգետքի օախախումը:                 |
| 3. Մուրսիլիս I   | բ. Դուր-Կուրիզալդու մայրաքաղաքի կառուցումը        |
| 4. Նարոնիդ       | զ. Տեյմայում խոշոր պալատական համալիրի կառուցումը  |
|                  | դ. Աշուրի նոր վերելքը, տարածքային նոր նվաճումները |
|                  | ե. Աբու-Միմբելի ժայռակերտ տաճարի կառուցումը       |

- 1) 1-բ, 2-ա, 3-զ, 4-դ
- 2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-զ
- 3) 1-դ, 2-ե, 3-զ, 4-ա
- 4) 1-զ, 2-ա, 3-ե, 4-բ

39

**Նշված գիտնականներից ո՞վ է եղել Կարլոս V կայսեր անձնական քժիշկը.**

- 1) Վեզալիուսը
- 2) Կոպեռնիկոսը
- 3) Պիտեր Բրյոնգել Ավագը
- 4) Ֆրենսիս Բեկոնը

40

**Ո՞վ է իրեն անվանել «Համայն Ռուսիո տիրակալ».**

- 1) Իշխան Դիմիտրին
- 2) Իվան III-ը
- 3) Իվան IV Սիելը
- 4) Միխայիլ Ռումանովը

41

Ո՞րն է Պուատիեի ճակատամարտի գլխավոր հետևանքը.

- 1) Արաբներն ամրապնդեցին իրենց դիրքերը Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայում:
- 2) Իսպանիան և Հյուսիսային Իտալիան ազատազրվեցին արաբներից:
- 3) Հյուսիսարևելյան Գալլիան նվաճվեց արաբների կողմից:
- 4) Կանգնեցվեց արաբների արշավանքները դեպի Արևմտյան Եվրոպա:

42

Ո՞րն էր 1870-1871 թթ. Գերմանիայի դեմ պատերազմում Ֆրանսիայի կրած պարտության գլխավոր հետևանքը.

- 1) Ֆրանսիայի հյուսիսի հարուստ հողերի միացումը Գերմանիային:
- 2) Լուի Նապոլեոնի կողմից պետական հեղաշրջման իրականացումը:
- 3) Սահմանադրական միապետության հաստատումը Ֆրանսիայում:
- 4) Հանրապետության վերականգնումը Ֆրանսիայում:

43

Հին աշխարհի գահակալներին դասավորել ըստ իրենց գահակալման հաջորդականության.

- ա. Ամենիոտեալ IV  
բ. Սալմանասար I  
գ. Համմուրապի  
դ. Թուլուլթի Նինուրտա I  
ե. Թուլիսալիաս II
- 1) գ, ե, ա, բ, դ
  - 2) ե, բ, ա, գ, դ
  - 3) ա, գ, ե, դ, բ
  - 4) դ, ե, գ, ա, բ

44

Պատմական իրադարձությունները իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Բրուսա բերդաքաղաքի գրավումը օսման Բեյի կողմից  
բ. Հյուսիսային Չինաստանի գրավումը մոնղոլների կողմից  
գ. Իկոնիայի սուլթանության հիմնադրումը  
դ. Համամոնդոլական առաջին դուրությայի հրավիրումը  
ե. Բաղդատի գրավումը մոնղոլների կողմից
- 1) գ, ե, ա, դ, բ
  - 2) բ, ե, ա, գ, դ
  - 3) գ, դ, բ, ե, ա
  - 4) դ, բ, գ, ա, ե

45

**Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Անգլիայի և բուրական երկու հանրապետությունների (Տրանսվալ և Օրանժ) միջև պատերազմի ավարտը  
բ. Ռուս-Ճապոնական պատերազմի ավարտը  
շ. Բալկանյան երկրորդ պատերազմի սկիզբը  
դ. Տրիպոլիտանիայի և Կիրենակայի զավթումը Իտալիայի կողմից  
ե. Բոսնիայի և Հերցոգովինայի բռնակցումը Ավստրո-Հունգարիային
- 1) ա, բ, ե, դ, զ  
2) զ, ե, ա, դ, բ  
3) ա, ե, զ, դ, բ  
4) բ, ա, դ, ե, զ

46

**Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |  |                |
|--|----------------|
| 1. Մարաստանի մայրաքաղաք Էքքատանի գրավումը<br>Կյուրոսի կողմից | ա. Ք.ա. 729 թ. |
| 2. Սարգոն II-ի խոշոր արշավանքը դեպի Ուրարտու                 | բ. Ք.ա. 553 թ. |
| 3. Բաբելոնի նվաճումը Թիգլաթպալասար III-ի կողմից              | շ. Ք.ա. 612 թ. |
| 4. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի անկումը                      | դ. Ք.ա. 525 թ. |
| 5. Ստորին Եգիպտոսի նվաճումը Կամբիզի կողմից                   | ե. Ք.ա. 714 թ. |
- 1) 1-բ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-դ  
2) 1-բ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-դ  
3) 1-դ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-ա  
4) 1-բ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ

47

**Կատարել համապատասխանեցում.**

- |             |  |
|-------------|--|
| 1. Ասում    | ա. Ծովերի աստվածը հունական դիցարանում  |
| 2. Պոսեյդոն | բ. Մեռնող և հարություն առնող աստվածը<br>եգիպտական դիցարանում                                 |
| 3. Ան       | շ. Երկնքի և երկրի, մարդու և մարդկային երջան-<br>կության արարիչը զրադաշտական դիցարանում       |
| 4. Օսիրիս   | դ. Հերակլեոպոլիսի գլխավոր աստվածը,<br>նախաստեղծ արարիչը, որից սերում էին մյուս<br>աստվածները |
| 5. Ռա       | ե. Աստվածների հայրը շումերական դիցարանում  |
|             | զ. Արևի աստվածը եգիպտական դիցարանում   |
- 1) 1-բ, 2-զ, 3-ե, 4-գ, 5-ա  
2) 1-բ, 2-զ, 3-դ, 4-ե, 5-ա  
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ  
4) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-զ

48

**Գործիչներին համապատասխանեցնել իրենց կառավարման օրոք տեղի ունեցած իրադարձություններին.**

- |                       |   |
|-----------------------|---|
| 1. Իշխան Վլադիմիր     | ա. Ուկե Հորդայի տիրապետության վերջնական տապալումը                   |
| 2. Իշխան Դմիտրի       | բ. Ռոստովի, Նովգորոդի, Տվերի միացումը                               |
| 3. Իշխան Օլեգ         | Մոսկվայի իշխանությանը   |
| 4. Յարոսլավ Իմաստուն  | գ. Ռուսական առաջին գրավոր օրենսգրքի՝ «Ռուսակայա պրավդա»-ի ստեղծումը |
|                       | դ. Կիևի և Նովգորոդի միավորումը                                      |
|                       | է. Քրիստոնեության հոչակումը Ռուսիայի պաշտոնական կրոն                |
| 1) 1-դ, 2-ե, 3-ք, 4-զ |   |
| 2) 1-դ, 2-ե, 3-զ, 4-ք |   |
| 3) 1-ե, 2-ա, 3-ք, 4-դ |   |
| 4) 1-ե, 2-ք, 3-դ, 4-զ |   |

49

**Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |  |            |
|--|------------|
| 1. Անգլիայի թագավոր Հենրիխ VIII-ի կողմից պառամենտի ընդունած «Գերազահության մասին» ակտի ստորագրումը | ա. 1489 թ. |
| 2. Սիմոն դը Մոնֆորի կողմից Խորհրդարանի հրավիրումը Լոնդոնում  | բ. 1598 թ. |
| 3. Ֆրանսիայի թագավոր Հենրիխ IV-ի կողմից Նանտի Էդիկտի հրատարակումը                                  | գ. 1534 թ. |
| 4. Կոստանդին XI Պալեոլոգոսի սպանությունը   | դ. 1453 թ. |
| 1) 1-զ, 2-ե, 3-ք, 4-դ  | է. 1265 թ. |
| 2) 1-զ, 2-ա, 3-ե, 4-դ  |            |
| 3) 1-ք, 2-ե, 3-դ, 4-ա  |            |
| 4) 1-ք, 2-դ, 3-զ, 4-ա  |            |

50

**Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |  |            |
|--|------------|
| 1. Վրաստանի՝ ԱՊՀ Պաշտպանության նախարարների խորհրդի կազմից դուրս գալու որոշումը   | ա. 2006 թ. |
| 2. ՀԱՊ-ը լիարժեք միջազգային կազմակերպության վերածելու մասին որոշման ընդունումը   | բ. 2007 թ. |
| 3. ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրների նախաձեռնությամբ Կոստոյի անկախության ճանաչումը  | գ. 2001 թ. |
| 4. Նյու Յորքի և Վաշինգտոնի ահաբեկչությունները  | դ. 2002 թ. |
| 5. ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահների կողմից Մոսկվայում «Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման վերաբերյալ» որոշման կայացումը | է. 2008 թ. |
| 6. «Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում  | լ. 2004 թ. |
| 1) 1-ք, 2-դ, 3-զ, 4-ե, 5-ք, 6-ա  |            |
| 2) 1-ե, 2-ա, 3-զ, 4-դ, 5-ք, 6-զ  |            |
| 3) 1-զ, 2-ե, 3-ք, 4-դ, 5-ե, 6-զ  |            |
| 4) 1-ա, 2-ե, 3-զ, 4-դ, 5-ք, 6-է  |            |

51

### Գլխավոր շտատների վերաբերյալ նշված փաստարկներից ո՞րն է սխալ.

- 1) Գլխավոր շտատները հրավիրվում էին թագավորի նախաձեռնությամբ և քննարկում էին նրան ֆինանսական աջակցություն ցույց տալու հարցը:
- 2) Գլխավոր շտատներում դասերը նիստերն անում էին առանձին-առանձին և նրանցից յուրաքանչյուրը կազմում էր առանձին պալատ:
- 3) Գլխավոր շտատներում յուրաքանչյուր պալատ ուներ մեկ ձայն:
- 4) Գլխավոր շտատներում ներկայացված էին չորս դասեր՝ հոգևորականներ, ազնվականներ, քաղաքացիներ, գյուղացիներ:

52

### Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) նպատակների վերաբերյալ նշված պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) Մարդու իրավունքների և ազատությունների խրախուսում ու տարածում՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից, կրոնից:
- 2) Անդամ պետությունների համատեղ ռազմական գործողություններ՝ նրանցից որևէ մեկի քաղաքական անկախությանը և անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում:
- 3) Տնտեսական, սոցիալական և հումանիտար բնույթի խնդիրների կարգավորում:
- 4) Ազրեսիվ գործողությունների ճնշում:

53

### Բերված փաստերից ո՞ր Ֆ.Ֆուկայամայի «Պատմության ավարտը» աշխատությունում արծարծված գաղափարնեից չէ.

- 1) Պատմությունն իբրև շարժում ավարտված է, քանզի աշխարհում վերջնականապես հաղթանակել է լիբերալ ժողովրդավարությունը և սպառողական մշակույթը:
- 2) Պատմությունն իբրև շարժում ավարտված է, քանզի գերիշխում են Արևմուտքն ու արևմտյան գաղափարախոսությունը:
- 3) Ապագայում առանձին փոքր պատերազմներ դեռ հնարավոր են, սակայն մեծ պատերազմների հավանականությունը խիստ նվազել է:
- 4) Ապագայում սպասվում են խոշոր բախումներ քաղաքակրթությունների միջև:

54

### Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- |              |             |
|--------------|-------------|
| 1. մայորդում | 4. ուլուս   |
| 2. դուրութայ | 5. արքոնտ   |
| 3. Էվպատրիդ  | 6. հուգենոտ |
- ա. փոխարքայություն մոնղոլական կայսրությունում
- բ. թագավորի կողմից նշանակվող արքայական կալվածքների կառավարիչ Ֆրանկական պետությունում
- գ. Կալվինական եկեղեցու հետևորդ Ֆրանսիայում
- դ. տոհմային ավագանու ներկայացուցիչ Հին Աթենքում
- ե. նախապես՝ ցմահ կառավարող գլխավոր գործադիր պաշտոնյա Հին Աթենքում
- զ. համամոնղոլական համագումար
- է. դասային միապետության ներկայացուցչական մարմին Իսպանիայում
- 1) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ, 6-գ
  - 2) 1-զ, 2-զ, 3-դ, 4-ե, 5-ե, 6-բ
  - 3) 1-բ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-ե, 6-զ
  - 4) 1-բ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-դ, 6-ե

55

## Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. Կոալիցիոն կառավարություն
  2. Հակակոմինտերնյան պակտ
  3. Դիմադրության շարժում
  4. Ռազմական կոմունիզմ
  5. Կոմունիստական ինտերնացիոնալ
- ա. Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին բոլշևիկների կողմից իրականացված սոցիալ-տնտեսական և քաղաքական կուրս:
- բ. Տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների միջազգային կազմակերպություն, որը գործել է 1919-1943 թթ.:
- գ. Տարբեր կուսակցություններից կազմված շարժում, որի մասնակիցները համոզված են, որ հակամարտությունները կարելի է լուծել միայն խաղաղ բանակցությունների ձանապարհով:
- դ. Տարբեր կուսակցությունների միջև կայացած համաձայնության արդյունքում նրանց ներկայացուցիչներից կազմված միացյալ կառավարություն
- ե. Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծավալված ազգային-ազատազրական, հակաֆաշիստական շարժում:
- գ. Գերմանիայի և Ճապոնիայի միջև 1936 թ. կնքված պայմանագիր, որին հետագայում միացան Իտալիան, Հունգարիան, Իսպանիան և այլ պետություններ:
- 1) 1-դ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-բ
  - 2) 1-զ, 2- բ, 3-ա, 4-զ, 5-դ
  - 3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-զ, 5-ա
  - 4) 1-զ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-բ

56

## Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. Անձնատվություն
  2. Ամբողջատիրություն
  3. Մենատիրություն
  4. Գերիշխանություն
  5. Ինքնիշխանություն
- ա. զինված ուժերի ռազմական դիմադրության դադարեցում
- բ. ձեռներեցների միավորում, որն իր ձեռքն է առնում արտադրության այս կամ այն բնագավառը
- գ. պետություն, որտեղ քաղաքական իշխանությունը գտնվում է հոգևորականության և նրա առաջնորդի ձեռքում
- դ. բռնապետական իշխանության ձև
- ե. պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում
- զ. որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության դեկավար, գերիշխող դիրքը մյուսների նկատմամբ
- 1) 1-ե, 2-դ, 3-բ, 4-զ, 5-գ
  - 2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-զ, 5-ե
  - 3) 1-ե, 2-ա, 3-զ, 4-զ, 5-դ
  - 4) 1-ա, 2-զ, 3-ե, 4-զ, 5-դ

57

Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Պեղոպնեսյան պատերազմների հետևանքներ:

- ա. Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության վերականգնումը Փոքր Ասիայում:
- բ. Մարդկային և նյութական խոշոր կորուստները:
- գ. Ք.ա. V դ.երկրորդ կեսին Աթենքի նվաճումը Պարսկաստանի կողմից:
- դ. Սպարտայի և Աթենքի միավորումը:
- ե. Հունական պոլիսների միջև հակասությունների վերացումը:
- զ. Ք.ա. IV դ.երկրորդ կեսին Հունաստանի նվաճումը Մակեդոնիայի կողմից:
- է. Հունական հասարակության հայտնվելը քաղաքական և տնտեսական խորը ձգնաժամի մեջ:
- ը. Հելլենիստական մշակույթի անկումը:
  - 1) բ, զ, գ, ը
  - 2) գ, դ, է, ը
  - 3) ա, բ, դ, է
  - 4) ա, բ, զ, է

58

Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են զանգվածային մշակույթի զարգացման և տարածման պատճառներ:

- ա. Զանգվածային արտադրությունն ու զանգվածային սպառումը:
- բ. Հասարակությունների գեղագիտական, բարոյական, զաղափարական հիմքերի թոփքածու զարգացումը:
- գ. Համընդհանուր գրագիտության աճը:
- դ. Զանգվածային դժգոհությունների ալիքը:
- ե. Զանգվածային լրատվության միջոցների աճն ու տարածումը:
- զ. Տեխնոգիաների զարգացումը:
- է. Ազգային ավանդական արժեհամակարգերի պահպանումը:
  - 1) ա, զ, է, զ
  - 2) բ, գ, դ, է
  - 3) գ, դ, է, զ
  - 4) ա, բ, զ, է

59

Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանքներ.

- ա. Օսմանյան Թուրքիան իրեն պարտված էր ճանաչում, Կ.Պոլիսը անցնում էր դաշնակիցների վերահսկողության տակ:
  - բ. Գերմանիան և Ավստրո-Հունգարիան պարտավորվում էին փոխառուցել հաղթող երկրների նյութական վնասները:
  - գ. Արևմտյան Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի հովանու ներքո ստեղծվում էր ժամանակավոր վարչություն:
  - դ. Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր հանել զորքերը Մակեդոնիայից և Պաղեստինից:
  - ե. Օսմանյան Թուրքիային էին տրվում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև՝ Կարսն ու Արդահանը:
  - զ. Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսիայի մի մասից, Ուկրաինայից և մերձբալթյան երկրներից:
  - է. Ռուսաստանը պարտավորվում էր վճարել 6 միլիոն ռուբլ մարդկանությանը:
- 1) գ, ե, զ
  - 2) ա, բ, դ
  - 3) բ, դ, է
  - 4) ե, զ, է

60

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Հոռմի գրավումը Սուլլայի կողմից և դիկտատուրայի հաստատումը
  - բ. Հոռմի գրավումը Հուլիոս Կեսարի բանակների կողմից, Պոմպեոսի փախուստը
  - գ. Տումարի բարեփոխումը Հոռմում, լուսնային օրացույցի փոխարինումը արևային օրացույցով
  - դ. Հոռմի քաղաքացիներին հավասար իրավունքներ ունենալու համար իշտալիկների ապստամբությունը
  - ե. Հուլիոս Կեսարի հոչակումը ցմահ դիկտատոր
  - զ. Պոմպեոսի կոնսոլ ընտրելը
  - է. Եռապետների հաղթանակը Կասիոսի և Բրուտոսի դեմ
  - ը. Օգոստոս Օկտավիանոսի հոչակումը ցմահ տրիբուն
  - թ. Երկրորդ եռապետության ստեղծումը
  - ժ. Գայոս Մարիուսի՝ Հոռմեական բանակի հրամանատար նշանակվելու մասին կոմիցիաների որոշումը
- 1) դ, ա, ժ, զ, բ, թ, ե, զ, է, ը
  - 2) դ, ժ, ա, զ, բ, զ, ե, թ, ե, ը
  - 3) ժ, ա, դ, բ, զ, ե, զ, թ, ը, է
  - 4) ժ, դ, ա, զ, բ, զ, ե, թ, ե, ը

61

**Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Թուրքիայի անկախության հռչակագրի ընդունումը Ստամբուլում  
իրավիրված մեջլիսում (Ազգային ժողով)
- բ. Ռեզա խանի հռչակվելը Իրանի շահ, Փահլավունիների արքայատոհմի  
հիմնադրումը
- շ. Խորհրդա-իրանական պայմանագրի ստորագրումը
- դ. Հանրապետության հռչակումը Թուրքիայում
- է. Ազգային բանակի կազմավորումը Իրանում
- զ. Իրանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը ճանաչող  
անզլո-իրանական համաձայնագրի կնքումը
- 1) ա, զ, գ, դ, է, բ  
2) գ, բ, դ, ա, զ, է  
3) դ, ա, է, զ, գ, բ  
4) զ, ա, գ, դ, բ, է

62

**Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Խաչակիրների պարտությունները Սալահ ադ Դինի բանակների կողմից
- բ. Եղեսիայի և Անտիոքի գրավումը խաչակիրների կողմից
- շ. Արևելքի վերջին հենակետ՝ Ակրայի գրավումը մահմեդականների կողմից
- դ. Հաշտության պայմանագրի կնքումը Անգլիայի արքա Ռիչարդ I-ի և Սալահ  
ադ Դինի միջև
- է. Երուսաղեմի գրավումը խաչակիրների կողմից և Երուսաղեմի թագավորության հիմնումը
- զ. Կլերմոն քաղաքում իրավիրված եկեղեցական ժողովը և Ուրբանոս II պապի  
կոչը
- է. Անտիոքի գրավումը եզիպտացիների կողմից
- ը. Կոստանդնուպոլիսի գրավումը խաչակիրների կողմից
- թ. Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VII-ի և Գերմանիայի կայսր Կոնրադ III-ի  
գլխավորած խաչակիրների անհաջող արշավանքը
- ժ. Զադար քաղաքի գրավումը խաչակիրների կողմից
- 1) զ, բ, է, թ, ա, դ, ը, ժ, գ, է  
2) զ, բ, է, թ, ա, դ, ը, է, կ  
3) զ, է, բ, ա, թ, ժ, դ, դ, ը, է, կ  
4) զ, թ, է, դ, բ, ժ, է, ը, գ, ա

63

**Ե՞րբ է ընդունվել հետևյալ բանաձևը.**

«Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքից  
ելնելով՝ նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակն  
ու իրազործում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը».

- 1) 1950 թ.  
2) 1952 թ.  
3) 1960 թ.  
4) 1970 թ.

**64** Ե՞րբ է ստորագրվել այն պայմանագիրը, որից մեջերված են հետևյալ խոսքերը.

«ԽՍՀՄ-ը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղական իրողություն դադարեցնում է իր գոյությունը»:

- 1) 1991 թ. դեկտեմբերի 3-ին
- 2) 1991 թ. դեկտեմբերի 8-ին
- 3) 1991 թ. դեկտեմբերի 21-ին
- 4) 1991 թ. դեկտեմբերի 25-ին

**65** Կատարել համապատասխանեցում.

N	Իրավական փաստաթուղթը	N	Տարեթիվը	N	Պետություն
1	Սարդինայի արքայական հատուկ օրենքով ստեղծված Սահմանադրություն	1	1789 թ.	1	Ռուսաստան
2	«Ազատ ձեռներեցության մասին օրենք»	2	1781 թ.	2	Ֆրանսիա
3	«Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»	3	1848 թ.	3	ԱՄՆ
4	«Համադաշնության հոդվածներ» սահմանադրություն	4	1791 թ.	4	Գերմանիա
		5	1775 թ.	5	Իտալիա

1

1	4	5
2	5	3
3	1	2
4	2	1

2

1	3	5
2	4	4
3	1	2
4	2	1

3

1	3	5
2	5	1
3	1	2
4	2	3

4

1	4	2
2	3	1
3	5	4
4	2	3

**66** Տարեթվերը համապատասխանեցնել ճակատամարտերին.

- |            |                             |
|------------|-----------------------------|
| 1. 1071 թ. | ա. Կուլիկովյի ճակատամարտը   |
| 2. 1240 թ. | բ. Մանազկերտի ճակատամարտը   |
| 3. 1242 թ. | գ. Յարմուկ գետի ճակատամարտը |
| 4. 1380 թ. | դ. Չուլ լճի ճակատամարտը     |
| 5. 1389 թ. | ե. Կոստվոյի ճակատամարտը     |
|            | գ. Նևյալի ճակատամարտը       |
- 1) 1-թ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-ե
  - 2) 1-թ, 2-զ, 3-դ, 4-զ, 5-ե
  - 3) 1-զ, 2-դ, 3-զ, 4-ե, 5-ա
  - 4) 1-ա, 2-զ, 3-ե, 4-թ, 5-զ

67

**Նշված փաստերից ընտրել երեքը, որոնք վերաբերում են Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխումներին.**

- ա. Ծառայության դիմաց զինվորներին տրամադրվում էին հողեր Հարավային Գալլիայում և Իսպանիայում:
- բ. Զինվորները սպառագինության ծախսերը և ապրուստի միջոցները ստանում էին զյուղացիների վճարած հարկերից:
- գ. Ծառայության դիմաց զինվորներին տրամադրվում էր հող այնտեղ ապրող զյուղացիների հետ միասին:
- դ. Զինվորները պետությունից ստանում էին բարձր աշխատավարձ:
- ե. Զինվորական ծառայության դիմաց հողը սկզբում տրվում էր ցմահ, ապա ժառանգաբար:
- գ. Եկեղեցին պարտավոր էր իր հողատարածքների 1/6-րդ մասը տրամադրել բարձրաստիճան զինվորականներին:
- է. Հարուստ հողատերերը պարտավոր էին իրենց զյուղացիներին տրամադրել զիվորների դաշտերում աշխատելու համար:
  - 1) ա, գ, դ
  - 2) բ, ե, է
  - 3) բ, գ, ե
  - 4) ա, բ, զ

68

**Նշված փաստերից ընտրել երեքը, որոնք Մարտին Լյութերի տեսակետներից չեն.**

- ա. Աստվածաշունչը մեկնաբանելու իրավունք ունեն միայն յութերական եկեղեցու հոգևորականները:
- բ. Աստվածաշնչում տեղ գտած սկզբունքներին հետևող հավատացյալը կարող է հասնել փրկության առանց եկեղեցու միջնորդության:
- գ. Եկեղեցին պետք է ենթարկվի պետությանը:
- դ. Հավատքի ճշմարիտ աղբյուրը Աստվածաշունչն ու Տիեզերական ժողովների կանոններն են:
- ե. Հոռմի պապի իշխանությունը հավասարապես պետք է տարածվի և՝ հոգևոր, և՝ աշխարհիկ իշխանության վրա:
- զ. Հավատքի միակ աղբյուրը Աստվածաշունչն է:
- է. Փրկության գործում եկեղեցին որպես միջնորդ դեր չունի:
- ը. Հոռմի պապը իրավունք չունի խառնվելու աշխարհիկ իշխանության գործերին:
  - 1) ա, է, ը
  - 2) ա, դ, ե
  - 3) բ, գ, զ
  - 4) դ, ե, ը

69

Նշված փաստերից ընտրել չորսը, որոնք վերցված են Վուդրո Վիլսոնի գաղափարներից:

- ա. Ըստ նրա ցանկացած ժողովուրդ կարող է ընտրել ինքնիշխանության այն ձևը,  
որը ցանկանում է՝ ընդհուպ մինչև անկախ պետականության կազմավորումը:
- բ. Նա առաջ է քաշել պետության տարածքային ամրողականության և ներքին  
գործերին շմիջամտելու սկզբունքը:
- գ. Նա ձևակերպել է «ներքին ինքնորոշման» սկզբունքը, ըստ որի երկրի  
բնակչության որոշ հատվածը չի կարող մասնակցել երկրի կառավարմանը:
- դ. Ըստ նրա իրավունքներն ու ազատությունները բնորոշ են միայն որոշակի  
ազգային պատկանելություն ունեցող անհատներին:
- ե. Ըստ նրա, եթե «արտաքին ինքնորոշման» իրագործումն անհնար է, ապա  
պետության բնակչության որոշ հատվածը կարող է օգտվել «ներքին  
ինքնորոշումից»:
- զ. Նա գտնում էր, որ ինքնորոշումը պետք է «կապել» ազգային սկզբունքի հետ:
- է. Նա կարծում էր, որ ազգերի ինքնորոշման սկզբունքն իրագործելիս պետք է  
հաշվի առնել այն պետության շահերը, որի կազմում գտնվում է:
- 1) բ, զ, դ, զ  
2) ա, դ, ե, զ  
3) բ, զ, զ, է  
4) ա, բ, զ, է

70

Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. օպտիմատ
2. արեոպազոս
3. լոգոգրավոս
4. նոմարքոս
5. պերիօդոս
6. գերուսիա

- ա. պատմական բնույթի առաջին երկերի հեղինակ Հին Հունաստանում
- բ. սպարտական պետության սահմանամերձ շրջաններում ապրող անձնապես  
ազատ, սակայն քաղաքացիական իրավունքներ չունեցող բնակչություն
- գ. տոհմային ավագանին Աթենքում
- դ. փարավոնի կողմից տեղերում նշանակվող պաշտոնյա Հին Եգիպտոսում
- է. ծերակույտի վերնախավի անդամ Հին Հոռոմում
- զ. ավագների խորհուրդ Աթենքում
- է. 30 հոգուց կազմված ավագների խորհուրդ Հին Սպարտայում

- 1) 1-ե, 2-զ, 3-բ, 4-դ, 5-ա, 6-զ  
2) 1-ա, 2-դ, 3-ե, 4-զ, 5-զ, 6-է  
3) 1-ա, 2-զ, 3-դ, 4-ե, 5-է, 6-բ  
4) 1-ե, 2-զ, 3-ա, 4-դ, 5-բ, 6-է

71

**Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. ուշք
  2. ջիզիե
  3. իկթա
  4. մուլք
  5. սավաֆի
  6. վակֆ
- ա. ծառայության դիմաց տրվող հողերը Արաբական խալիֆայությունում
- բ. մուսուլման բնակչության կողմից վճարվող Տասանորդ հարկը Արաբական խալիֆայությունում
- գ. մասնավոր սեփականություն համարվող հողերը Արաբական խալիֆայությունում
- դ. գլխահարկ Արաբական խալիֆայությունում
- ե. հոգևոր հաստատություններին պատկանող հողերը Արաբական խալիֆայությունում
- գ. կառավարող տոհմին պատկանող հողերը Արաբական խալիֆայությունում
- է. ոչ մուսուլման բնակչության կողմից վճարվող հարկատեսակ Արաբական խալիֆայությունում
- 1) 1-ե, 2-ք, 3-ա, 4-զ, 5-զ, 6-է
  - 2) 1-ք, 2-դ, 3-ա, 4-զ, 5-զ, 6-է
  - 3) 1-զ, 2-դ, 3-ք, 4-ա, 5-է, 6-ե
  - 4) 1-է, 2-ք, 3-ե, 4-դ, 5-զ, 6-ա

72

**Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. կլասիցիզմ
  2. սուպրեմատիզմ
  3. իմպրեսիոնիզմ
  4. էքսպրեսիոնիզմ
  5. այուրուեալիզմ
- ա. Արվեստի այս ուղղության հետևորդների կարծիքով միակ իրական գոյություն ունեցողը մարդու հոգեկան աշխարհն է, որի արտացոլումը արվեստի գլխավոր նպատակն է:
- բ. Այս ուղղության հետևորդներն առարկաներին տալիս են իրականության պատրանք, միավորում իրականը և ոչ իրականը:
- գ. Արվեստի այս ուղղության հետևորդների համոզմամբ արվեստագետը պետք է ոչ թե պատճենահանի բնությունը, այլ գույների անսովոր համադրմամբ ցույց տա իր ակնթարթային տպավորության գեղեցկությունը:
- դ. Ըստ արվեստի այս ուղղության գեղեցիկն անփոփոխ է և հավիտենական, ինչպես բնությունը:
- է. Արվեստի այս ուղղությանը բնորոշ է երկրաշափական վերացականությունը:
- զ. Արվեստի այս ուղղության ներկայացուցիչները բարդ սարքավորումների միջոցով ստեղծում են շարժման և ռիթմի պատրանք:
- 1) 1-ք, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ
  - 2) 1-դ, 2-ա, 3-զ, 4-ք, 5-ե
  - 3) 1-դ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-ք
  - 4) 1-զ, 2-ե, 3-զ, 4-ք, 5-դ

73

Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Դիոկղետիանոս կայսեր գործունեության հետևանքներ.

- ա. Հիմք դրվեց մեկ անձի անսահմանափակ իշխանությամբ ռազմական միապետության:
  - բ. Կայսրությունը բաժանվեց երկու մասի՝ արևելյան և արևմտյան, յուրաքանչյուրը կառավարում էին օգոստոս տիտղոսն ունեցող մարդիկ:
  - գ. Պրովինցիաների տասնյակ հազարավոր բնակիչների շնորհվեց հռոմեական քաղաքացիություն
  - դ. Մեծ Բրիտանիայում կառուցվեց կայսեր անունը կրող ամրությունների շղթան, որը ձգվում էր կղզու արևմուտքից արևելք:
  - ե. Մայրաքաղաք հոչակվեց Բուֆորի ափին գտնվող Բյուզանդիոն քաղաքը, որը վերանվանվեց Կոստանդնուպոլիս:
  - զ. Կայսրությունը բաժանվեց 12 դիոցեզների, որոնք ել իրենց հերթին բաժանվեցին պրովինցիաների:
  - է. Ավարտվեց պրինցիպատը և հիմք դրվեց կառավարման նոր եղանակին՝ դոմինատին:
- 1) ա բ, զ, է
  - 2) բ, գ, դ, զ
  - 3) ա, բ, է, զ
  - 4) ա, զ, դ, է

74

Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Իվան IV Ահեղի գործունեության հետևանքներ.

- ա. Ստեղծվեցին կառավարման համապետական մարմիններ՝ պրիկազներ:
  - բ. Մատուցվեց զինվորական ծառայության նոր կարգ՝ ըստ ծագման և ըստ հավաքագրման:
  - զ. Ընդունվեց հողերի սեփականության մասին օրենքը:
  - դ. Պատրիարքին վերապահվեց ամբողջ Ռուսիայում հարկեր հավաքելու իրավունքը:
  - ե. Ռուսաստանին միացվեցին Տվերը, Աստրախանը և Արևելյան Սիբիրը:
  - զ. Ստեղծվեց առաջին գրավոր օրենսգիրքը:
  - է. Կոստանդնուպոլիսի պատրիարքին ենթակա միտրոպոլիտության փոխարեն ստեղծվեց պատրիարքություն:
  - ը. Օրենսդրության մեջ ամրապնդվեց «բոյարների և հպատակների իրավունք» հասկացությունը:
  - թ. Ռուսաստանին միացվեցին Կազանը, Աստրախանը և Արևմտյան Սիբիրը:
  - ժ. Նահանգներում տարածատվեցին գործադիր և դատական իշխանությունները:
- 1) բ, է, զ, ժ
  - 2) ա, բ, է, թ
  - 3) ա, դ, թ, լ
  - 4) զ, դ, զ, ժ

75

**Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Բակտրիայի սատրապ Բեսի դավադրությունը
  - բ. Թերմոպիլյան կիրճի ճակատամարտը
  - գ. Սպարտայի արքա Արքիլամոսի մուտքը Ատտիկա
  - դ. Կյուրոս Կրտսերի ապստամբությունը Արտաքսերքսես II-ի դեմ
  - ե. Աթենական նավատորմի սիցիլիական արշավանքը
  - զ. Կլիսթենեսի բարեփոխումները
  - է. Բեոտիայի Պլատեա քաղաքի ճակատամարտը
  - ը. Պիլոս քաղաքի գրավումը Դեմոսթենեսի զորքերի կողմից
  - թ. Բարդիայի ապստամբությունը
  - ժ. Նիկիասի հաշտության կնքումը Սպարտայի և Աթենքի միջև
- 1) թ, զ, թ, է, զ, ը, ծ, ե, դ, ա
  - 2) թ, զ, թ, է, ը, զ, ծ, ե, ա, դ
  - 3) զ, թ, է, թ, զ, ծ, ա, ը, դ, ե
  - 4) զ, թ, թ, զ, է, ա, ը, ե, ծ, դ, դ

76

**Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Ստալինգրադի ճակատամարտը
  - բ. Յալթայի խորհրդաժողովը
  - գ. Մոսկվայի ճակատամարտը
  - դ. Պատերազմում ԽՍՀՄ-ին աջակցելու մասին Մեծ Բրիտանիայի հայտարարությունը
  - ե. Թեհրանի խորհրդաժողովը
  - զ. Նյուրնբերգյան դատավարությունը
  - է. Ճապոնական Նազասակի քաղաքի ատոմային ռմբահարումը
  - ը. Պոտսդամի խորհրդաժողովը
  - թ. Խորհրդային կարգերի հաստատումը Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում
  - ժ. Կուրսկի ճակատամարտը
- 1) դ, զ, թ, ա, ծ, ե, թ, ը, զ, է
  - 2) զ, թ, դ, ա, է, ծ, ը, թ, է, զ
  - 3) թ, դ, զ, ա, ծ, ե, թ, ը, է, զ
  - 4) դ, զ, ա, զ, է, թ, ծ, թ, ը, է

**Կատարել համապատասխանեցում.**

N	Երկիր	N	Հեղինակ	N	Ստեղծագործություն
1	Անգլիա	1	Ալեքսանդր Սոլժենիցին	1	«Զախօսիում»
2	Իտալիա	2	Ալեքսանդր Ֆադեև	2	«Հաղթանակ»
3	ԱՄՆ	3	Նիկոլ Մարիավելի	3	«Տիրակալը»
4	Ռուսաստան	4	Ո. Հանթինգթոն	4	«Ուտոպիա»
		5	Թոմաս Մոր	5	«Քաղաքակրթությունների բախումը»

1

1	4	4
2	5	3
3	3	2
4	1	1

2

1	2	3
2	5	2
3	1	1
4	3	4

3

1	4	3
2	5	1
3	1	5
4	2	4

4

1	5	4
2	3	3
3	4	5
4	2	1

**Կատարել համապատասխանեցում.**

N	Կայսր	N	Գահակալման տարեթիվ	N	Գործունեություն
1	Կլավդիոս	1	69-79 թթ.	1	Հսկողություն սահմանեց հարկերի գանձման և ֆինանսների ծախսման նկատմամբ, կրծատեց արքունիքի ծախսերը:
2	Տրայանոս	2	161-180 թթ.	2	Մեծ բրիտանիայում կառուցեց իր անունը կրող ամրությունների շղթա, որը ձգվում էր կղզու արևմուտքից արևելք:
3	Մարկոս Ավրելիոս	3	41-54 թթ.	3	Նվաճեց Միջագետքը, պարթևների մայրաքաղաք Տիգրանք:
4	Վեսպասիանոս	4	54-68 թթ.	4	Մեծ դժվարությամբ կարողացավ կանխել գերմանական ցեղերից եկող վտանգը:
		5	98-117 թթ.	5	Պրովինցիաների տասնյակ հազարավոր բնակչիների շնորհվեց հոռմեական քաղաքացիություն:

1

1	3	5
2	5	3
3	2	4
4	1	1

2

1	3	1
2	5	3
3	1	2
4	2	5

3

1	4	1
2	1	2
3	2	4
4	3	5

4

1	3	5
2	5	1
3	1	2
4	2	4

79

**Մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել իրենց գաղափարներին.**

1. Արիստոտել
  2. Պյութագորաս
  3. Պլատոն
  4. Հիպարքոս
  5. Պտղոմեոս
  6. Մարկիանոս Կապելա
- ա. Ըստ նրա՝ զիսավորը «բարիքի գաղափարն է», մյուս գաղափարները գտնվում են նրանից ներքեւ, իսկ զգայական, նյութական աշխարհը գաղափարների ստվերներն են:
- բ. Նա զարգացրեց տիեզերքի երկրակենտրոն կառուցվածքի մասին տեսությունը:
- գ. Նա կազմեց աստղացուցակ, որը պարունակում էր շուրջ հազար աստղերի երկնային դիրքաթվերը և պայծառությունների գնահատականները:
- դ. Նա աշխարհի նյութական հիմք էր համարում ապեյրոնը (անվերջ, անորոշ սկզբնանյութ):
- ե. Ըստ նրա տեսության՝ թիվը բոլոր իրերի կեցության սկիզբն է:
- գ. Նրա գոյաբանական ուսմունքը տատանվում էր իդեալիզմի և մատերիալիզմի միջև:
- է. Նա մշակեց այն առարկաների ցանկը, որոնք ընկած էին անտիկ կրթական համակարգի հիմքում:
- 1) 1-ա, 2-ե, 3-զ, 4-գ, 5-բ, 6-է
  - 2) 1-զ, 2-զ, 3-ա, 4-դ, 5-ա, 6-բ
  - 3) 1-զ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-բ, 6-է
  - 4) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-զ, 6-բ

80

**Կատարել համապատասխանեցում.**

N	Նախագահի անունը	N	Պաշտոնա վարման տարեթիվը	N	Տարիքը նախա- գահ ընտրվելու պահին	N	Նահանգային պատկանելիութ- յունը
1	Հերբերտ Հուվեր	1	1933-1945 թթ.	1	60	1	Մեծ նահանգ (Կալիֆորնիա)
2	Դուայթ Էյզենհաուեր	2	1929-1933 թթ.	2	48	2	Մեծ նահանգ (Նյու Յորք)
3	Հարրի Թրուման	3	1921-1923 թթ.	3	62	3	Միջին նահանգ (Ջորջիա)
4	Ֆրանկլին Ռուզվելտ	4	1953-1961 թթ.	4	51	4	Միջին նահանգ (Սիսուրի)
		5	1945-1953 թթ.	5	54	5	Մեծ նահանգ (Փենսիլվանիա)

1

2

3

4

1	3	1	2
2	1	3	4
3	4	2	5
4	5	4	1

1	2	5	1
2	4	3	5
3	5	1	4
4	1	4	2

1	2	4	3
2	4	2	1
3	5	3	2
4	1	5	5

1	3	5	4
2	4	3	5
3	2	4	1
4	1	5	2